


ԳՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

# ՀԱՅԵՍՏԱՆԻ ՎԱՅՐԻ ՅՈՐԵՆՆԵՐԸ

(ԱՐՏԱՑՈՒՄՈՒ ՎԵՐԱԳՆԱԾՈՒՄՈՒՄՆԵՐԻ ԱԳՐՈՆՈՄ.-ԻՑ)





Lhe  
142

58

95

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՅՐԻ ՅՈՐԵՆՆԵՐԸ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԲՈՒՅՍՆԵՐԻ ՄԱԳԻՍՏԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ԱՌԹԻՎ. — Կուլտուրական բույսերի ծագման պրոբլեմը շատ հին ժամանակներից է վեր հետաքրքրում և մարդկությանը: Վարո՞նք են յեղել մեր սովորական մշակվող բույսերի նախահայրերը, վո՞րտեղ և գտնվում նրանց հայրենիքը, նրանց սկզբնական ծագման և հետագա տարածման կենտրոնները, ի՞նչ փոխհարաբերություն գոյություն ունի միեւնույն վայրի և կուլտուրական ձեւերի մեջ՝ ղենետիկայի տեսակետից և այլն: Սրանք հարցեր են, վորոնցից շատերը մինչեւ հիմա չեն զեռ լուծված չի կարելի համարել վերջնականապես, անգամ մեր գլխավոր կուլտուրաների համար:

Սրան դուզրնթաց կարեւոր դործնական նշանակություն ունի այն հարցը, թե ի՞նչպես են վայրի դրությունից ստացվել ներկայումս մշակվող բուսական մի շարք ձեւեր, վորոնք հաճախ հիմնովին տարբերվում են իրենց նախահայրերից: Այստեղ և, վոր մենք ընդհուպ մոտենում ենք բուսական ձեւերի առաջանալու պրոցեսներին, վորոնց ըմբռնելու դեպքում, գուցե հնարավորություն յունենանք արհեստական կերպով ստանալ նորանոր արդյունավետ բուսական ձեւեր: Այս խնդիրը ներկայիս ակտուալ հարցերից մեկն է:

Կուլտուրական բույսերի վայրի տեսակներին նվիրված են բազմաթիվ հետազոտություններ և ուսումնասիրություններ: Այս ուղղությամբ, մանավանդ աչքի չեն ընկնում Դե-Կանդոլի հետազոտությունները: Վերջինս կիրառելով բուսաբանական աշխարհագրական մեթոդը, մի շարք կուլտուրական բույսերի և նրանց վայրի տեսակների համար նշում և նրանց հայրենիքը:

Ներկայումս այս յեղրակացությունների խոչորագույն մասը հերքվում են: Իսկ մյուս կողմից՝ ավելի կոնկրետացվում են, շնորհիվ, գլխավորապես, Խորհրդային Միության գիտական հաստատությունների կողմից համաշխարհային մասշտաբով տարվող գիտական-հետազոտական աշխատանքների, վորոնց գլխավորում և ակադեմիկ Ն. Ի. Վավիլովը:

Այս ուղղությամբ խոչոր աշխատանքներ և տարել Համամիութենական Կիրառական Բուսաբանություն և Նոր Կուլտուրաների Ինստիտուտը (Всесоюзный Институт прикладной ботаники и новых культур), վորի ղեկավարն և հանդիսանում ակադեմիկ Ն. Ի. Վավիլովը:

Ինստիտուտն այս 10-12 տարվա ընթացքում կազմակերպել և բազմաթիվ եքսկուրսիաներ ղեպի յերկրագնդի գլխավոր յերկրները: Վավիլովին, իր աշխատակիցների հետ, հաջողվում և համաշխարհային նյութեր ժողովել, ուսումնասիրել և մեր Միության այս կամ այն շրջանում նորանոր կուլտուրաներ մտցնել մշակություն մեջ:

Ուսումնասիրվում են արժեք ներկայացնող յերկրագործության հին աշխները, հարավային և արեւելյան լեռնային յերկրներն ու նրանց կից շրջանները:

Այսպես, հետազոտվում են Պաղեստինը, Սիրիան, Միջագետքը, Հյուսիսային Աֆրիկան, Միջերկրական ծովի հյուսիսային յերկրները, Հարեջատանը, Փոքր Ասիան, Պարսկաստանը, մասամբ Անդրկովկասը, Միջին Ասիան, Ալիանստանը, Մոնղոլիան, Պամիրը, Ճապոնիան, Չինաստանի մի մասը և այլն: Հայաստանը 41-րդ յերկիրն է, վսր այցելել է Վալիլովը, Տիշտ է, չատկարձ ժամանակով, հետաքրքրվելով գլխավորապես մեր կողմից հայտարարած վայրի ցորեններով:

Իր տրամադրության տակ ունենալով կուլտուրական բույսերին և նրանց վայրի տեսակներին վերաբերող համաշխարհային մասշտաբով հավաքած նյութեր և, մյուս կողմից, կիրառելով ավելի կատարյալ դիֆերենցիալ բուսաբանական-աշխարհագրական մեթոդ, Վալիլովին հաջողվում է հիմնովին վերանայել Դե-Կանդոլի յեղրակացությունները և կուլտուրական բույսերի ու նրանց վայրի տեսակների համար նշել ծագման 6 կենտրոններ, վսրոնք բնորոշվում են մշակվող բույսերի գեների ամենամեծ բազմազանությամբ ու նրանց նսրանսր արտահայտություններով:

Ն. Ի. Վալիլովը սրարգում է, վսր կուլտուրական բույսերի մի խումբը առաջացել է դաշտամոլախոտային դրությունից: Այսպես, աչսրայի (ро́ж) դաշտամոլախոտային ձևերը (серно-ро́зовые формы), վսրոնք սովորաբար ուղեկցում են աշնանացան ցորենների ցանքերին, կամ վարսակի նույն ձևերը, վսրոնք մոլախոտային խառնուրդ են կազմում դարնանացանների մեջ, ավելի սղակաս սղահանջկոտ լինելով գեղի կլիմայական ու հողային սղայմանները՝ հետզհետե, վսրոն սղայմաններում, սկսում են գերիշխել, մեծամասնություն կազմել հիմնական ցանքի մեջ: Ուրիշ խոսքով՝ նրանք «կուլտուրայի մեջ են մանում», դսրս մղելով արտից տվյալ սղայմաններին ավելի վատ հարմարված սկզբնական տեսակը: Այսպես, արեելքում, մասնավորապես մեղ մոտ, լեռնային չրջաններում, մեր աչքի առաջ մշակության մեջ են մանում մոլախոտային վարսակը և խրփուկը (обсир), վուշի ցանքերի մեջ տարածված մի չսրք մոլախոտային բույսերը՝ «դաշղա-կտավհատը»՝ *Lallemanta iib,erica* «հարածուկը», կամ «սեփուկը»՝ *Brassica campestris* «խարղալը»՝ *Erucа sativa* և այլն: Վսսղի ցանքերի միջից դսրս է յեկել և մշակության մեջ է մտել «քսրուշնան»՝ *vicia ervilia* և այլն:

Երգերումի չրջանում մոլախոտային դրությունից մշակության մեջ է մտել ամենաանսղեաք սովսրական մոլախոտ կազմող «դիվան» բույսը — *Cepha'aria syriaca*, վսրպես յուղատու բույս և այլն:

ՎԱՅՐԻ ՅՈՐԵՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԵԻՐ. — Մի կողմ թսղնելով, առհասարակ, կուլտուրական բույսերի վայրի տեսակների ու նրանց ծագման կենտրոնների հարցը, այստեղ մենք կանղ սոնենք յերկրագնղի գլխավոր և ամենատարածված հացարույսի՝ ցորենի վայրի տեսակներին հետազոտության վրա: Պիտի բնղղծել, վսր մինչեղ հիմա հայանի չե, թե ի՛նչպես է մտել ցորենը մշակության մեջ և ի՛նչպես են ստացվել նրա տարրեր տեսակները:

Հայաստանի վայրի ու կուլտուրական ցորենների սսսումնասիրությունը մենք սսրել ենք Հայաստանի Պեասական Համալսարանի Մասնավոր յերկրադործության սմբիսնի գծով:

Դեռ ինչեղ 1906 թ. ցորենի վայրի տեսակները չեյին հայտարերված յ՛շ մի տեղ, չնայած վսր վսրոնումներ կատարվում էյին մի չսրք յերկրներում:

Յենթադրվում էր, զոր ցորենի հայրենիքը Միջին Ասիան է, այսպես կոչված Արալ-Կասպյան ավազանը, բայց յերկրաբանական աշխարհը ջանում, յերբ այդ յայնուպիսով տարածությունը ծածկվում է ջրով, բոլոր վայրի ցորենները մյուս բուսականության հետ միասին, բնականաբար, փոխանցում, անհայտանում են:

Դրա համար էլ մի ժամանակ վայրի ցորենների վարձուներից կարծես հրաժարվում են:

1906 թ. առաջին անգամ Սարգսյանը Պաղեստինում հայտարարում է վայրի ցորեններ՝ *Tr. dieccoides* Schulz բուսականի մեծ թվով ու ձևերով:

Այս գյուտն ահալին սկսուցիս յե առաջացնում: Ինչ զոր անհայտացած էր համարվում բնորոշ, նորից դանդում է: Դեպի Պաղեստին կազմակերպվում են մի շարք հետազոտական եքսպեդիցիաներ: Վաշինգտոնից հասուկ եքսպեդիցիա յե մեկնում դեպի վայրի ցորենների վայրը: Սկսում են բազմակողմանի կերպով ուսումնասիրել վայրի ցորենների աշխատակներն ու ձևերը, վայրերը, փորակդ տնում են նրանք և այլն:

Արաւհայտվում են կարծիքներ, թե Պաղեստինն աշխատական վայրն է հանդիսանում, փորակդ առաջին անգամ ծագում է մարդկության կուլտուրան: Աշխատում են սպասարկել վայրի ցորենները, փորակա քսերոֆիտներ և այլն:

1927 թ. Պաղեստին է մեկնում նաև Համամխութեական Կիրատական Բուսաբանության Ինստիտուտի եքսպեդիցիան՝ ահալեմիկ Վաֆիլովի առաջնորդությամբ: Այստեղ եքսպեդիցիան ուսումնասիրում է վայրի ցորենների վայրը, նրանց տարածման եկնյակական սրբանները և այլն:

Բայց Պաղեստինից, վայրի ցորեններ՝ *Tr. dieccoides* հայտարարված են նաև Սիրիայում և միջագետքում:

1925-26 թ. պրոֆ. Պ. Մ. Ժուկովսկին Կիլիկիայի լեռներում՝ Բուլղար-դագում գտնում է նույնպես վայրի ցորեններ (մեկ աշխատակ՝ *v. sponta neonigrum* Flakcb

Բայց պետք է բնորոշել, զոր վայրի ցորենների այս բոլոր վայրերն էլ՝ Պաղեստինը, Սիրիան, Միջագետքը և Կիլիկիան՝ ամփոփ մեկ աշխարհագրական շրջան են կազմում, զորից դուրս փոշ մի յերկրում դրանք մինչև 1929 թ. հայտարարված չեն լինում: Այս բոլոր յերկրները կապված են Միջերկրական ծովի ավազանի հետ:

1929 թ. ամսը, իհարկե փորոշ նախնական հետազոտական աշխատանքներից հետո, մենք հայտարարում ենք վայրի ցորեններ մեզ մոտ՝ Հայաստանում: Սա վերին աստիճանի հետաքրքրական և շատերի համար միանգամայն անսպասելի յերեվույթ էր, զոր, ըստ ահալեմիկ Ն. Ի. Վաֆիլովի և մի շարք ուրիշ գիտնականների, առնի մեծ, համաշխարհային նշանակություն:

Չարմանալի յեր և՛ աշխատանքը, զոր դրանք գտնվում են Յերևանից 5—6 կիլոմետր հեռավորության վրա:

Այս գյուտը հիմնովին փոխում է գոյություն ունեցող աշխատակներ, թե վայրի ցորենների հայրենիքը միայն Պաղեստինն է հանդիսանում: Փոխախության են յենթադրվում նաև սրա հետ կապված մի շարք յեզրակացություններ:

Այսպիսով, առաջանում է վայրի ցորենների տարածման մի նոր ինքնուրույն կենտրոն, զոր հիմնովին տարբերվում է առաջինից: Այսպես, Պաղեստինի վայրի ցորենները *Tr. dieccoides* պրոֆ. Զվյակարեկերը կցում է Արալ-Կասպյան ավազանի ցորեններին:

րիական սեկցիային: Հայաստանի վայրի ցորենները, Վորոնժ տարբերվում են վերջինից, թե՛ աշխարհագրական, թե՛ մորֆոլոգիական և թե՛ կենսաբանական տեսակետից, մենք ընդունում ենք իրեն ինքնուրույն, առանձին հայկական սեկցիա:

Հետազոտում կատարած ուսումնասիրությունները մեզ ամօրժեցին, Վոր հայկական սեկցիան իրոք տարբեր և և իր ամբողջ էությունը միանգամայն համապատասխանում և Հայաստանի սեկցիայի վաճառներին:

**ՑՈՐԵՆԻ ԳԵՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ.**—Վայրի ցորենների հայտարարումը Հայաստանում, այսինքն՝ մի նոր, բոլորովին տարբեր և առանձնացած աշխարհագրական կենտրոնում—առանձնապես մեծ նշանակություն և ստանում, յերբ դրա հետ միասին մենք ուշադրություն ենք դարձնում նաև Հայաստանի կուլտուրական ցորենների բուսաբանական կազմի վրա:

Մեր հետազոտությունները ցույց են տալիս, Վոր Հայաստանի բարձրավանդակը հարուստ է ցորենի տեսակներով, վորոնցից մի քանիսը հատուկ են այս յերկրին և կազմում են տիպիկ ենդեմներ:

Մյուս կողմից՝ այս ցորեններից շատերը ներկայացված են այստեղ մեծ մասամբ բազմաթիվ ձևերով, հետևապես այստեղ արտահայտվում է ցորենի զեների սմեկամեծ բազմազանությունը, նրա ամեկամեծ պոտենցիալը:

Այսպես, ենդեմներ են կազմում Հայաստանի բարձրավանդակի համար կոնդիկ ցորենները *Tr. compactum Host*, Վորոնժ իրենց ալլատեսակների բազմազանությամբ Ավգանատանից հետո 2-րդ տեղն են բռնում այստեղ:

Ավգանատանում Վավիլոնյան *Tr. compactum*-ից հայտարարել և 50 ալլատեսակ, իսկ Հայաստանում մենք հայտարարել ենք 30 ալլատեսակ: Վերջիններիս մեջ կան մի շարք նորերը, Վորոնժ հատուկ են միայն Հայաստանին, (խալապուրկա զույնի հատկեր ունեցող ցորենների ձևեր *v. Wagarschapati Tuman*, *v. araraticum Tum.*, *v. eriwanense Tum.* և այլն):

Հայաստանի ենդեմներից է և պարսկական ցորենը *Tr. Pers m V v*, Վորոն տաճին անդամ հայտարարել է Ն. Ի. Վավիլոնյան, չնորհիվ այդ ցորենի ունեցած խոնավատեղի սեկային հիմնականությունների նկատմամբ:

Հետազոտում պարզվեց, Վոր այս ցորենը հայտնի չէ նույնպես և մշակության մեջ Անդրկովկասում. Վրաստանում հայտարարել եր պրոֆ. Ժուկովսկին, Հայաստանում՝ մենք: 1925-26 թ. դաշտային կուլտուրաների հետազոտություն ժամանակ մեզ հաջողվեց պարզել, Վոր պարսկական ցորենի մաքուր ցանքերը շատ տարածված են մեր բնակային շրջաններում և ունեն տարածման հետևյալ արեալը—Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերը (Հրազդան գետի հովտի վերի մասերը), այստեղից Մխիթանի ձորով դեպի Արագածի արևելյան լանջերը, այստեղից դիմել ուղեվորվում և դեպի Համամլու-Պարնի և Ղզըլ-Ղոչի վերայով անցնում և Վրաստան (Ախալքալակի դալան):

Ամենայն հավանականությամբ այս ցորենի մշակության կենտրոնը—չառ հին ժամանակներից՝ Հայաստանի բարձրավանդակն և հանդիսանում, դուրեկերումի լեռները. այստեղից նա տարածվել և և մյուս շրջաններն ու յերկրները (Վրաստան, մասամբ՝ Դաղստան և այլն): Հետաքրքրականն այն է, Վոր Վրաստանում այս ցորենը մշակվում և գլխավորապես նրա հայտնակ վայրերում (Ախալքալակի շրջան, Բորժոմի շրջան):

Վերցնենք սովորական փափուկ ցորենը Tr. Vulgare Will., վորի հայրենիքը, ըստ Ն. Ի. Վավիլովի, Հարավ-Արևմտյան Ասիան է։ Սա նույնպես ներկայացված է մեզ մոտ դարձանալի բազմազանությունների, ճիշտ է ավելի պակաս, քան Ավդանատանում։ Այստեղ մենք հայտարարել ենք 50-ից ավելի այլատեսակի պատկանող միանգամայն տարբեր խմբեր—քիստավոր, կիսաքիստավոր, անքիստ և այլն։ Բացի սովորական սպիտակ, կարմիր և սև հատկանի ձևերից, այստեղ տարածված են խայտարեկտ հատկանի մի շարք ձևեր v. Hamadnicum, v. Kasvinii, v. Luristanicum և այլն, վորոնք նույնպես շատ տիպիկ են այս բարձրավանդակի համար։

Վանի շրջանից ստացած Արճեչի «ղիր» ցորենների մեջ մենք հայտարարել ենք փափուկ ցորենների մի նոր խումբ—ճյուղավոր հատկանի—Tr. vulgare compositum mihi, վոր մինչև հիմա հայտնի չի լիկել և վորը նույնպես Հայաստանի բարձրավանդակի ամենահետաքրքիր ենդիմներից է։

Նույնն են Արճեչի «ղիր» ցորենները, վորոնք ներկայացված են կիսաքիստ ձևերով—sub-meridionale vav. sub-messopotamicum Tuman. և այլն, չե՞ վոր սրանք նույնպես ենդիմիկ են նույն բարձրավանդակի համար։

Հայաստանում շատ հին ժամանակներից մշակվում է նույն ցորենների ցեղին պատկանող հաճարը—Tr. dicoccum, վոր ներկայումս էլ Անդրկովկասյան 3 հանրապետություններից բոլորից շատ մշակվում է Հայաստանում։ Սրա մշակությունը հին ժողովուրդների հետ է կապված։

Այստեղ նույնպես տեղ-տեղ, առանձին բույսերով ցորենի ցանքերի մեջ պատահում է հաճարների շատ հազվագյուտ տեսակը՝ Tr. Spelta.

Այս բոլորն, իհարկե, պատահականությունն չէ։ Պարզ է, վոր Հայաստանում ցորենների ցեղը ներկայացված է բավականի մեծ քվով ենդիմիկ ձևերով, իսկ մյուս կողմից՝ այստեղ նկատվում է ցորենի գեների ամենամեծ բազմազանությունը, նրանց ձևերի արտահայտման ամենամեծ պոտենցիալը։ Ուրիշ խոսքով, Հայաստանը ցորենների բազմազանության և ձևավորման խոշոր կենտրոններից մեկն է հանդիսանում։

Ահա, յերբ այս ընդհանուր փոնի վրա այստեղ մենք տեսնում ենք և՛ վայրի ցորենների ներկայություն—պատկերն ավելի ևս վորոշակի յե դառնում և բնականաբար միտք է ծագում վոր աշխատագրականորեն Հայաստանի բարձրավանդակը ցորենի մշակության ծագման վոչ թե յերկրորդական, այլ թերևս սկզբնական կենտրոններից մեկն է հանդիսանում։

Ավելի լայն յեղրակացություններ անելու համար անհրաժեշտ է մի շարք հետազոտություններ կատարել յերկրագնդի այն անկյունում, վոր ընդգրկում է իբրև մեջ Ուրմիայի, Վանա լճի և Սևանա լճի ավազանները։

**ՎԱՅՐԻ ԾՈՐԵՆԻ ՎԱՅՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.**—Վայրի ցորենները մենք հայտարարել ենք 1929 թվին Յերեվանի շրջակայքում—Քաղաքից՝ Շորբուլաղ տանող ճանապարհի մոտերքում։ Յերեվանից, ավելի ճիշտ՝ Թոխմախան լճից, այդ դժով դեպի վեր, Արարատյան դաշտի լեռնաշղթա սկսում է փոխվել։ Առաջանում են քարքարոտ բլուրներ՝ ցածրերում—Յերեվանի քարհանքների մոտ և կավային՝ դրանից բարձր՝ սկսվում է նախալեռնային շրջանը (1100 մետր)։

Շրջանի օկլիֆը քանի դնում, բարձրանում է մինչև Վոդլաբերթի և

Քյերփիշլուի առաջին բարձր սարերը: Հողերն աշտակ կաժային են, ունեն կարմիր դուշն, տեղ-տեղ իրենց մեջ սլարուճակում են բաժանվում սպեր, փորանք մի քանի տեղերում սպիտակ փոշով ծածկում են հողի մակերեսը: Հողերի մեջ սլարուճակում են հաճախ կրխատալիկ զիպոի տախակ կտորներ: Այս շրջանին իր ցածրի մասով մտնում է հարավ-արևելյան Գուերի մեջ, փորանք մաս ապաշտյում փոստվելու յեն: Ցածրի բլուրները, սափորարար մերկ, առանց բուսականության են, թեև սլիտանի յեն մշակության համր, բայց բացառիկ չորության պատճառով չեն սպառնում: Միայն 1200 մետրից բարձր աշտակ կարելի չե տեսնել ցորենի ցանքեր՝ «ղեմի» անջրդի հողերում: Հողերն քնդհանրապես հարուստ են, տեղ-տեղ ունեն բաժանված լավ ֆիզիքական ստրուկտուրա, բայց գտնվելով նախալեռնային շրջանի չոր կլիմայական պայմաններում, նրանք միայն անձրևիային տարիներին են համեմատաբար լավ բերք տալիս:

Ցածրի մասերում, բլուրների մեջ յեղած փոքր և քիչ-չառ հարթ հողամասերում տեղ-տեղ աչքի յեն բնկնում ջրարբի ցորենի ցանքեր:

Շրջանի անջրդի հողերում մշակում են գլխավորապես ցորեն. հաճախ շառ չնչին քանակությամբ, սխեռ և տեղ-տեղ ձմերուկ: Ցորեններից մշակում են «սպիտակահատը», փորի մեջ դերիշխում է v. graecum-ի ձեերը, «գալղալսուր» v. Delfi և «կոնդիկ» կամ «կոմչատկա» տեսակը (Tr. compactum Host): Վերջինս մեծ մասամբ ներկայացված է v. rubiceps -ի ձեերով:

Վալլի ցորենի առաջի բույսերը դուել ենք ջրարբի ցորենի արտի վերի սահմանի տկոսի մեջ, մոտ 1160 մ. բարձրության վրա: Արտին կից խոպան հողերում սրանք բոլորովին բացակայում էին, յերեկ հողերը շառ չոր լինելու պատճառով: Ամենից հաճախ սրանք սլարուճակում են 1250-1400 մ. բարձրության սահմաններում:

Վալլի ցորենի ամենաբարձր կետը, փորտեղ սրանք դեռ սլարուճակում էին, ըստ մեր անցյալ տարվա հետադրուսության, 1400 մ. էր: Բայց այս 30 թ. ուսումնասիրությանը ցույց տվեց, փոր առանձին դեպքերում սրանք բարձրանում են մինչև 1500 մ., այսինքն՝ մինչև նախալեռնային գոտու համարյա վերջին կետը:

Խիստ բնորոշ է այն հանդամանքը, փոր վալլի ցորեններին աշտակ սովորաբար ուղեկցում են միահատ ցորենների վալլի տեսակները Tr. aegilopoides և Tr. Thaoudar, սրանք սկսած 1200 մ. հաճախ սովորական ֆոն են կադմում, փորի վրա աչքի յեն բնկնում վալլի ցորենի հատ ու կենսա բույսերը: Քնդհանրապես միահատ ցորեններն ավելի շառ են տարածված, քան վալլի ցորենները (Tr. dicoccoide s) և ավելի շառ էլ աչքի յեն բնկում, քան վերջինները, փորովհետև ավելի բարձր բույսեր են սրանց մեջ. վալլի ցորենները բնական պայմաններում ցածրի հարկն են կադմում:

Համեմատաբար մեծ տարածություններ են բռնում վալլի ցորենները Շորբուլաղ գյուղի շրջակայքում: Գյուղի անմիջապես տակը, ճանապարհից անջ (Յերեանից դեպի) մի հողամաս ամբողջովին ծածկված է գրանցով: Ցորենի բույսերը շառ ցածր են, կոդմակի բուսականությանը շառ թույլ և ներկայացված, գլխավորապես Acroptylon pteris: Այս տարի չորության պատճառով բույսերն ավելի վառ դրսևթյան մեջ էին:

Վալլի ցորեններ բաժանված են շառ սլարուճակում են և Շորբուլաղից բարձր

հոգամասերում՝ առանձին խավերով, կամ ցրված միահատիկ ցորենների մեջ:

Շորրուլաղից վեր գերիշխող կոնաձև կավային բլուրների հյուսիսային լանջերն ամբողջովին ծածկված են միահատիկ ցորեններով և այնպես խիտ, վոր կարծես հասկապես ցանված լինեն: Մեր այս տարվա հետադարձությունները ցույց տվին, վոր վայրի monococcum ներք ալյուսկ բարձրանում են մոտ 1600 մ.:

Յեթև անցյալ տարի վայրի ցորենները հայտարերել էինք Շորրուլաղ գյուղի չրջակայքում, ապա այս տարի մեր գետ շափարտած հետադարձությունը ցույց տվեց, վոր նրանք մեզ մոտ ահագին տարածությունների վրա յերկարությամբ՝ սկսած Յերեան-Ջրվեժ գծից տարածվում են մինչև Բաշգյառնիի ձորը (ձորում բացակայում են), մոտ 1160 մ. մինչև 1400 մ. բարձրության սահմաններում:

Նույն տարածության վրա գտնվում են վայրի միահատ ցորենները (Tr. aegilopoides, Tr. Thaoudar) բայց գնում են գետի լեռները, ավելի բարձր (1600 մ.):

Այդ մեծ տարածության վրա վայրի ցորենները հայտարերել ենք հետևյալ գյուղերի չրջակայքում—Ջրվեժ, Շորրուլաղ, Տուկ, Ավգալար, Վաղարշերդ, Քյերիիշխույի տակը, ավերված Կուրբաղալու, Բեթլիջա, Գոխա և Բաշգյառնի:

Այս բոլոր տեղերումն էլ հիմնական ֆոնը վայրի միահատիկներն են կազմում (Tr. aegilopoides), իսկ սրանց մեջ առանձին խավերով—վայրի ցորենները՝ մի տեղ շատ, մի տեղ՝ առանձին, հատուկ կենտ բույսերով:

Ինչ վերաբերում է Հայաստանի մյուս չրջաններին, շատ համանական է, վոր վայրի ցորեններ կլինեն մի շարք ուրիշ տեղերում: Այս ուղղությամբ հետադարձությունները գետ չեն ավարտված:

Ինչպիսի տեղերում են աճում վայրի ցորենները: Նրանց տարածվելու համար կա՞ վորեւս սրենք, թե՞ վոչ: Անպայման: Թե՛ անցյալ տարվա, թե՛ այս տարվա հետադարձություններն այս ուղղությամբ՝ մեզ բավականին նյութ են տվել: Ամփոփենք այդ տվյալները:

Վայրի ցորենները Tr. dicoccoides, ինչպես և վայրի միահատիկ ցորենները Tr. aegilopoides բնանում են կավային բլուրների լանջերին՝ 1160 մ. վոչ ցածր, 1500 մ. վոչ բարձր՝ առաջինները և 1600 մ. վոչ բարձր՝ 2-րդ խմբի ցորենները: Tr. dicoccoides ավելի շատ աչքի չե ընկնում 1250—1400 մ. սահմաններում, Tr. aegilopoides 1200—1500 մ.:

Նկատվում է, վոր յերկուսն էլ ավելի հաճախ են պատահում, համեմատաբար, մաքուր, վորոչ փխրություն ունեցող կավային հողերում և խույս են տալիս ժայռոտ, քարքարոտ տեղերից, մանավանդ վայրի ցորենները:

Վայրի ցորենների հաճախ կարելի չե պատահել փոքրիկ ձորակներում ու սրանց լանջերում, մանավանդ, յեթև սրանք մաքուր են և չեն ծածկված բազմամյա բույսերի շատ խիտ ծածկոցով: Դրանք նույնպես պատահում են դանադան պատճառներից գոյացած բլուրների ծալքերում և ճեղքվածքներում, մանավանդ, յեթև այս տեղերով անցնում են գարնան ջրերը:

Վայրի ցորենները շատ սովորական են 2 արտերի միջև գտնվող միջ-

նախնների վրա ( на межах ) : Նրանք պատահում են նույնպես արտերի յեզերքներում, առունների կամ աղոսների մեջ, վորտեղ կա փութը հող և վորտեղ կուտակվում է վորոշ խոնավություն ( ծլելու համար ) :

Վայրի ցորենները Tr. dicoccoides -ները մանավանդ Tr. aegilopoides-ները յերբեմն մանում են և ցանքերի մեջ ( заходят в посебы ) . մանավանդ հաճախ և նկատվում այս յերևույթը Tr. aegilopoides -ների դեպքում : Նրանց բարձր ցողունները, մանավանդ սե հասկերով—հեշտությամբ կարելի չե նկատել մինչև անգամ հեռվից՝ ցորենի կամ հաճարի ցանքերի մեջ :

Բայց վայրի ցորեններն այս դրույթյամբ քիչ են պատահում, վորովհետև նրանց և կուլտուրական ցորենների վեղետացիայի շրջանները մեծ մասամբ չեն համապատասխանում իրար . կուլտուրականներն ավելի չուտ են հասնում, թեև վերջինս կախված է վայրի ցորենի այս կամ այն ձևից :

Վայրի ցորենները պատահում են և աշնանից «ցել» արած (հերկած) հողերում . այս դեպքում դռնվելով ավելի լավ պայմաններում (փութը և վորոշ չափով խոնավ հող), նրանք ուժեղ կերպով աճում են և խոշոր բույսեր ու հասկեր տալիս :

Վերջերս, վայրի ցորեններ կարելի չե տեսնել և մեկ կամ մի քանի տարի հանգիստ թողած ( на парах и залежах ) ցելահողերում և խոպան տեղերում :

Նրանք չեն աճում ուժեղ թեքություն ունեցող թեկուղ և կավային լանջերում : Այսպիսի լանջերը կամ վրվածքները սովորաբար լինում են մերկ, առանց բուսականության :

Վայրի ցորենները նույնպես խույս են տալիս քարքարոտ, ժայռաոտ չոր լանջերից : Յեթե պատահում էլ են քարքարոտ տեղերում, ապա հողը, քարերի մեջ յեղած տարածություններում, լինում է փութը, իսկ քարերն այդ հողի յերեսին են ցրված լինում :

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՅՐԻ ԾՈՐԵՆՆԵՐԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ .**—Ինչպես քիչ վեր նշեցինք, մեր Tr. dicoccoides -ներ մենք կցում ենք վայրի ցորենների հայկական սեկցիային, վոր հիմնական կերպով տարբերվում է սիրիական սեկցիայից : Տարբերությունը մեծ է թե՛ կենսաբանական և թե՛ մորֆոլոգիական տեսակետից : Կենսաբանական տեսակետից մեր վայրի ցորենները բնորոշվում են միայն աշնանացան և չատ ուշ հասնող ձևերով : Մինչդեռ սիրիական սեկցիայի ցորենների մեջ կան նույնպես և զարնանացան ձևեր : Բացի դրանից, նրանք ներկայացված են վաղահաս բուսաներով : Տարբերությունը՝ հասունության տեսակետից՝ 15—20 որ և կաղմում : Պետհամալսարանի հողամասում, վորտեղ այս տարի ցանված էր մեծ թվով և մաքուր դժերով, թե՛ վայրի և թե՛ կուլտուրական ցորեններ, Պաղեստինի վայրի ցորենը մինչև անգամ մեր ամենավաղահաս ցորեններից մի 15—20 որով ավելի չուտ հասունացան :

Գուցե հենց այս և պատճառը, վոր մեր վայրի ցորենները հաճախ չեն մանում ցորենի ցանքերի մեջ, մինչդեռ Պաղեստինում, ինչպես հայտնեց մեզ Ն. Ի. Վավիլովը, այս յերևույթը սովորական է :

Մեր միահասակ ցորենները նույնպես մազահաս են. յերբ հնձում են ցորենը, սրանց պատահական բույսերի, հասած հասկիկները թափվում են դետին և հետևյալ տարին ծխում, աշտպիսով նրանք հեշտությամբ մտնում են ցանքերի մեջ:

Մորֆոլոգիական տեսակետից հայկական սեկցիայի վայրի ցորենները նույնպես ուժեղ կերպով տարբերվում են սիրիականից: Այն ժամանակ, յերբ Պաղեստինի ցորենների տերևները և ցողունները միանգամայն մերկ են, ախինքն՝ չեն ծածկված մազմզուկներով, Հայաստանի վայրի ցորենների տերևները թե՛ վերևից և թե՛ ցածրից նույնպես և տերևի բուրնը խիտ ծածկված են յերկար և կոշտ մազմզուկներով. վերջիններս դնվում են նույնպես և նրանց աղանջիկների վրա:

Պաղեստինի *Tr. dicoccoides*-ների թվերը սովորաբար կիսականգուն կամ կանգուն դիրք ունեն, մինչդեռ հայկական սեկցիայի նույն ցորենները միանգամայն սիռավող, տարածվող թվերով են բնորոշվում, մանավանդ սկզբնական շրջանում: Պաղեստինի ցորենների հատիկներն ավելի մուգ կարմիր գույն ունեն, մեր վայրի ցորենների հատիկները բաց կարմրավուն են, ավելի ճիշտ՝ մուգ-դեղնավուն գույն ունեն:

Հայաստանի վայրի ցորենները բավականի շատ ձևերով են ներկայացված: Այսպես 1929 թ. հայտարերել ենք 5 ալլատեսակ, վորոնցից 3 նոր են և չեն նկարագրված:

Կանգ առնենք առանձին ալլատեսակների վրա:

Վտրի ցորեններ—*Tr. dicoccoides* Schulz.

Հասկերը մերկ—(հասկիկային թեփուկները ծածկված չեն մազմզուկներով):

1. *V. Straussianum* Schulz—Հասկը սպիտակ

2. *V. Aaronsolmi* Flksb.—Հասկը կարմիր

Նոր ալլատեսակներ հայտնաբերված մեր կողմից:

3. *V. Pseudo-Straussianum* Tuman—Հասկը. սպիտակ, քիստերը՝ սև.

4. *V. Pseudo-Aaronsolmi* Tuman—Հասկը կարմիր, քիստերը սև:

5. *V. Nigricans* Tuman.—Հասկը սև կարմիր ֆոնի վրա:

Ամենից հաճախ պատահում են սպիտակ և կարմիր հասկանի ալլատեսակները, իսկ սևաքիստ և սևահասկ ալլատեսակները համեմատաբար քիչ են պատահում: Չենք, վորոնց հասկիկային թեփուկները ծածկված են մազմզուկներով—այստեղ բոլորովին մենք չենք հայտարերել:

Այս 5 ալլատեսակների սահմանում հայտարերել ենք մի շարք ձևեր—խոշոր բույսեր և յերկար հասկեր ունեցող, թզուկ բույսեր ունեցող և չնչին կանաչ մասսա տվող մանր հասկերով ձևեր, նոսր և խիտ հասկանի ձևեր, վաղահաս և ուշ հասնող և այլն: Ընդհանրապես, սրանք ներկայացված են բավականի մեծ բազմադանությամբ:

ՎԱՅՐԻ ՑՈՐԵՆՆԵՐԻ ՄՈՐՖՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.—

Վայրի ցորենները, ինչպես և մյուս հասկավոր վայրի հացարույսերը, տարբերվում են իրենց համապատասխանող կուլտուրական տեսակետից և ձևերից մի շարք ելական նշաններով և առանձնահատկություններով:

Այսպես, վայրի ցորենները բնորոշվում են կտրատալից հասկերով, աչիներն՝ հասկը փշրելուց կամ կալսելու զեպքում մանր մասնիկների, հասկիկների յե փերածվում, մինչդեռ կուլտուրական ձեվերի հասկերը կալսելիս հասկիկների հետ միասին առանձին յերկար կոթուն էլ և ստացվում, վորի վրայի ծունկածե փոսերում հակադիր նստած են լինում նրա հասկիկները:

Բացի այդ, վայրի ցորենի կոթունի առանձին մասնիկների յեզրերում և հասկիկներն իրենց հիմքում ծածկված են յերկար և խիտ մազմզուկներով:

Կուլտուրական ձեւերը դուրկ են լինում գրանցից. կալսելիս կամ փշրելիս կուլտուրական ձեւերի հասկիկներից հեշտությամբ թափվում են հատիկները, ընդհակառակը՝ վայրի տեսակների հասկիկներից հատիկներ չեն թափվում, սրանց ծաղկային և հասկիկային թեփուկները շատ ուժեղ կերպով են ընդգրկում կում ցորենի հատիկները: Բացատրություն կազմում և հաճարը:

Անցնենք վայրի ցորենների մորֆոլոգիական առանձնահատկություններին:

Tr. dicoccoides -ների ծիլերը ներկված են անտոցիանով, սրանց թփերը (տերեները) մանավանդ մինչև ցողուն զցելը և հասկակալիլը, բոլորովին փոխված են, ունեն մուգ-կանաչ գույն: Ֆուգունների հանգույցները ուռած են, թույլ կերպով ծածկված՝ աղվամազով և ներկված են անտոցիանով:

Տերեի թիթեղը ծածկված և կոպիտ և յերկար մազմզուկներով, տակից հաճախ ալելի ուժեղ ու յերկար, քան յերեսի կողմից: Տերեի բունը նույնպես ծածկված և մազմզուկներով: Ականջիկները թարթիչավոր են և առանց անտոցիանի: Առեչքների փոշանոթները սպիտակ են. հասկերը քիչ թե շատ նսար են, առանց մազմզուկների և սափակ: Դրանց յերկշարքանի կողմը համեմատաբար շատ լայն և, քան յերեսի կողմը:

Հասկի յերկարությունը քիստերով 17,5 սանտ. և, առանց քիստերի՝ 5,0-7,8 սանտ.: Հասկի լայնությունը 0,4-0,45 սանտ. և, իսկ հաստությունը՝ 0,65-0,7 սանտ.: Քիստերն անքիստ՝ հասկի յերկարության են, յերբեմն՝ ալելի յերկար: Հայտարերել ենք ձեւեր՝ կոպիտ ու կոշտ կոնսիստենցիայով և, ընդհակառակը, շատ նուրբ:

Հասկերը, ինչպես ասացինք մի քիչ վերե, շատ չուտ կտրատվում են և հասունանալուն պես իսկույն եւթ թափվում առանձին հասկիկներով: Այս պարաճառով էլ այնտեղ, վորտեղ աճում են վայրի ցորենները, նրանց հասունանալու ժամանակ գետինը ծածկվում և դրանց հասկիկներով:

Հասկիկներն ունեն յերկար յեռանկյունի ձե, նրանք սովորաբար, յերկծաղկային յեն: Հասկիկային թեփուկները կոշտ են և կոպիտ, ունեն 2 հատ հալելվածք (KILB): Հասկիկային թեփուկի 2 սրվածքների մեջ գտնվող, այսպես կոչված՝ «սինուսը» բոլոր ձեւերը չունի: Հասկիկային թեփուկները տալի են, յերկար ու ձգված, վերի ծայրում բութ են և ունեն մի հատ քիչ թե շատ զարգացած սրվածք, վոր կազմում և հալելվածքի (KILB) շարունակությունը: Կան ձեւեր, վորոնք դուրկ են այս սրվածքից, կամ շատ թույլ են արտահայտված: Բայց կան բավականին յերկար սրվածք ունեցող ձեւեր: Յերկբորդ սրվածքը սովորաբար աննկատելի յե, զարգացած չե և հաճախ բացակայում է:

Ներքին ծաղկային թեփուկը չի ձեղքվում, մինչդեռ միահաս ցորենի բույսը խմբերի ներքին ծաղկային թեփուկները, իբրև սրենք, ձեղքվում են 2 մասի: Այս հատկութունը պրոֆ. Ֆլյակսբերգերը բնութենում և իբրև շատ կայուն և հաստատուն սխառմաստիկական-անասմիական նշան՝ վայրի ցորենները (Tr. dicoccoides) միահատիկ ցորեններից (Tr. monococcum, Tr. aegilopoides, Tr. Thaoudar) տարբերելու համար, մանավանդ, յերբ արտաքին մորֆոլոգիական նշաններով նրանց դժվար և լինում տարբերել մեկը մյուսից:

Արտաքին ծաղկային թեփուկն ունի յերկուք բխտ:

Հատիկները շատ բաց կարմրավուն են, մոտենում են դեղնավունի, ունեն ապակենման կտրվածք, յերկարավուն են, կողքերից սեղմված են և յերկարությամբ ունեն լավ արտահայտված ախտ: Հատիկի մեջ դանվում և սովորաբար 2 հատիկ, թեև յերբեմն պատահում և և 3 հատիկ: Հատիկի յերկարությունը—0,9 սանտ. և, ցողունների բարձրությունը՝ 40-70 սանտ.: Բնական պայմաններում բույսերը մոտ 2 անգամ ցածր են լինում: Ներկայացված են տշնանացան ձևերով:

**ՎԱՅՐԻ ՅՈՐԵՆՆԵՐԻՆ ՈՒՂԵԿՅՈՂ ՄԻԱՀԱՏԻԿ ՅՈՐԵՆՆԵՐԻ ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ.**—Վորովհետև վայրի ցորենների սովորաբար ուղեկցում են և հաճախ դրանց ֆոնն են կազմում միահատիկ ցորենների տեսակները, այստեղ կանգ առնենք նաև սրանց բուսաբանական կազմի վրա:

Հայաստանում մենք հայտարբերել ենք սրանց 3 տեսակը:

Tr. aegilopoides Bal.

Tr. Thaoudar Rent.

Tr. monococcum L.

Վայրի ցորեններին ուղեկցում են միայն առաջին 2 տեսակը, իսկ 3-րդը—միահատիկ ցորենների կուլտուրական տեսակը (Tr. monococcum)՝ սովորական խառնուրդ և կազմում Լոռի-Փամբակի շրջանի (Դսեղ, Իջահատ և այլն) հաճախ ցանքերի մեջ: Այսպես, սրա կարմրահասակ, մաղմղուկներով ծածկված ալլատեսակը v. Hornemanni Chm հաճախ 20 տոկոսից ավելի խառնուրդ և կազմում:

Ընդհանրապես վայրի միահատիկ ցորենների կլասիֆիկացիայի համար պրոֆ. Ֆլյակսբերգերը հիմք և բնութենում նրանց հատիկների քանակը.—

Մեկ քիստանի—uniaristata Flaksb.—Tr. aegilopoides Bal.

Յերկու քիստանի—binaristata Flaksb.—Tr. Thaoudar Rent.

Այս յերկուսն ևլ բավականի մեծ թվով և բազմաթիվ ձևերով ներկայացված են Հայաստանում, մանավանդ առաջին տեսակը:

Հետազոտության ընթացքում, սկսած 1925 թ. մինչև 1930 թ. Tr. aegilopoides-ներից հայտարբերել ենք զանազան ժամանակ և նույն շրջաններում, վորտեղ և վայրի ցորենների հետևյալ 9 ալլատեսակը, վորոնցից մեկը նոր և,

Tr. aegilopoides Bal.

Հասկերը մերկ.

1 v. Beoticum Boiss. —Հասկը սպիտակ.

2 v. Pseudo-Beoticum Flaksb.—Հասկը սպիտակ, քիստը սև.

3 v. Symbolonense Flaksb.—Հասկը կարմիր.

- 4 v. Lorionowi Flksb. — Հասկը կարմիր, քիստը սև.  
 5 v. Baydaricum Flksb. — Հասկը սև, կարմիր ֆոնի վրա.  
 6 v. Panciei Flksb. — Հասկը սև, դեղին ֆոնի վրա.

Հասկերը ծածկված մազմզուկներով.

- 7 v. Stramineonigrum Flksb. — Հասկը ս', դեղին ֆոնի վրա.  
 8 v. Hellenae Flksb. — Հասկը սև կարմիր ֆոնի վրա.

Նոր ալլատեսակ.

- 9 v. Cineraceum Tuman. — Հասկը մոխրագույն դեղին ֆոնի վրա.

Այս 9 ալլատեսակները ներկայացված են մեզ մոտ բազմաթիվ ձևերով՝ խիտ հասկանի, նոսր հասկանի, կարճ քիստանի, կանաչ հատիկանի, կոպիտ և նուրբ ձևերով և այլն: Այս բոլոր միահատ ցորենները պատկանում են աշխանացան ընտանիքին:

Յերկրորդ տեսակը — Tr. Thaoudar ներկայացված է (առայթմա) 3 ալլատեսակով. —

- 1 v. Reuteri Flksb. — Հասկը սպիտակ.  
 2 v. Balansoe Flksb. — Հասկը կարմիր.  
 3 v. Rufinigrum Flksb. — Հասկը սև, կարմիր ֆոնի վրա.

Սրանց տարածման մեջ նկատվում է վորոշ կանոնավորություն: Այսպես, ցածրերում ավելի հաճախ են պատահում միահատիկ ցորենների սպիտակահասկ ձևերը, իսկ ավելի բարձրերում (բայց վոչ շատ բարձր)՝ սրանց սև-վահասկ ձևերը: Վերջիններս նույնպես ավելի հաճախ են պատահում ցորենի ցանքերի մեջ, մանավանդ Ավդալար և Կարաբաղլու գյուղերի շրջակայքում:

Պետք է նկատել, վոր միահատիկ ցորենները անհամեմատ ավելի շատ են տարածված, քան վայրի ցորենները: Տեղ-տեղ նրանք ահադին տարածություններ են բուծում և այնպես խիտ, վոր յերբեմն գյուղացիք սրանց հարում են, վորպես խոտ ուտողործելու համար:

Բացի միահատիկ-ցորեններից, վայրի ցորեններին հաճախ ուղեկցում են Aegilops- ների մի շարք տեսակները, ինչպես՝ Ae. cylindrica, Ae. triuncialis, և այլն: Մյուս բուսականությունից աչքի յեն ընկնում, բավականին հաճախ պրոֆ. Տրոյիցկու վորոշման համաձայն Acrotylon pieris, Turgeia latifolia, Lolium persicum, Convolvulus arvensis, Agropyrum orientale և այլն:

Հայաստանի վայրի ցորենները, մեր խնդրանք պրոֆ. Լեվիտսկին (Լենինգրադում) յենթարկել է ցիտոլոգիական ուսումնասիրության: Այս աշխատանքներին մասնակցել է նաև Համամիութենական Կիրառական Բուսաբանության Ինստիտուտի գործուղված մեր Համալսարանի գյուղֆակի ասպիրանտ Ա. Արարատյանը:

Հետազոտությունը պարզել է, վոր մեր վայրի ցորենների սոմատիք բջիջների մեջ գիպլոիդ քրոմոսոմների թիվը հավասար է 28, ուրեմն՝ հապլոիդը հավասար է 14-ի:

Ցիտոլոգիական մեթոդն ավելի ճիշտ միջոց է՝ վայրի ցորենները Tr. dicocoides միահատիկ ցորեններից (Tr. monococcum, Tr. aegilopoides, Tr. Thaoudar տարբերելու համար, վորովհետև վերջիններիս քրոմոսոմների թիվը նույն

սոմատիք բջիջների մեջ յերկու անգամ պակաս է, ալսինքն՝ հասլիսիդ—7, գիսլիսիդ—14:

Այսպիսով, թե արտաքին՝ մորֆոլոգիական ու անատոմիական, թե ներքին՝ ցիտոլոգիական հատկություններով ու նշաններով սրանք իրոք վայրի ցորեններ են *Tr. dicoccoides* Schulz.

\*\*\*

Հայաստանի վայրի ցորենների շուրջ դեռ մի շարք նոր ուսումնասիրություններ պիտի տարվեն, մանավանդ՝ գենետիկական հետազոտություններ, որոնց կապը կուլտուրական ցորենների հետ վորոշելու համար: Սրանք կարող են մեծ դրժնական նշանակություն ունենալ նաև դանազան սելեկցիոն աշխատանքների համար, հիբրիդիզացիայի միջոցով կարելի չե սպասարժել սրանց մեր չոր շրջաններում, վորպես խոտարույսեր և այլն:

\*\*\*

P.S. Այս հոդվածը տարագրության հանձնելուց հետո, մեր հետադա հետադատությունների ընթացքում պարզվեց, վոր վայրի ցորենները Հայաստանում ներկայացված են անհամեմատ ավելի շատ ալլատեսակներով ու ձևերով, քան նկարագրել է յինք ապագրվող այս աշխատության մեջ:

Այսպես վայրի ցորեններից—*Tr. dicoccoides*-ներից նայտաբերել ենք ևս 5 նոր ալլատեսակ, ուրեմն նախկին ալլատեսակների հետ 10-ը, վորից 8-ը նոր:

*Tr. aegilopoides* ներից—11 միանգամայն նոր ալլատեսակներ—առաջինների հետ—20, վորից 12 նոր:

*Tr. Thaoudar*-ներից—12 ալլատեսակ, վորից 9-ը բոլորովին նոր ալլատեսակ, իսկ առաջինների հետ—15:

Վայրի միահատիկ ցորենների ընդհանուր թիվը Հայաստանում կազմում է—35 ալլատեսակ, վորից 21-ը նոր ցորեններ են և առաջին անգամն են նկարագրվում մեր կողմից: Մինչդեռ սրանց ընդհանուր թիվը, ժողոված բոլոր յերկրներից, վորտեղ սրանք պատահում են (Բաղկանյան թերակղզի, Ղրիմ, Փոքր Ասիա և այլն)—հաղիվ է հասնում 18—20 ալլատեսակի:


Սա խոշոր նշանակություն ունեցող փաստ է, վորը ցույց է տալիս, վոր իրոք Հայաստանի բարձրամակարդ համաշխարհային մասշտաբով ցորենի գեների բազմազանության և ձևափոքման պրոցեսների ամենախոշոր կենտրոններից մեկն է հանդիսանում:

Հայտաբերված նոր ցորեններն իրենց բազմաթիվ ձևերով առանձին խոշոր ուսումնասիրության նյութ են ծառայելու:

#### ՈՐՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Н. ВАВИЛОВ.—«Центры происхождения культ. растений» 1926 г.
2. Н. ВАВИЛОВ.—«О происхождении культ. ржи». 1917 г.
3. Н. ВАВИЛОВ.—«Географическая локализация Генов пшеницы на земном шаре». 1929 г. Ленинград

4. Ս. ЖУКОВСКИЙ.—«Современное состояние изучения культурн. растений в С. С. С. Р. и Заграницей» — «Достижения и перспективы в области прикл. ботаники, Генетики и Селекции». 1929 г.
5. М. ТУМАНЯН.—«Дикие однозернянки и двузернянки в Армении» — «Труды прикл. бот. и Селекции» 1930 г.
6. М. ТУМАНЯН.—«Карликовые пшеницы Армении» — «Труды прикл. ботан. и Селекции». Том XIX вып. 1. 1928 г.
7. М. ТУМАНЯН.—«К изучению хлебных злаков Ванского района» — «Труды по прикл. бот. и Селекции» Том XXII вып. 2-ой. 1929 г.
8. К. ФЛЯКСБЕРГЕР.—«К изучению диких однозерн. и двузернянок и их филогенетической связи между собой и с культурными» — «Труды по прикл. бот. и Селекции». Том XVI. 1926 г.
9. К. ФЛЯКСБЕРГЕР.—«Пшеницы однозернянки» — «Труды по прикл. бот. и Селекции». Том XV. 1925 г.



251  
147

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ


Պատվեր 1100. Գրանցում 5831 ք. Տիրաժ 100



1. Tr. Dicoccoides v. Straussianum Schulz.

2. Tr. Dicoccoides v. pseudo-Aaronsohni mihi

Վայրի ցորենի տարբեր աշխատեսակներն ու ձեվերը  
(հորմալ մեծությամբ)






Վալրի ցորենի հասկը իր հասկիկներով (նորմալ մեծությամբ)





վայրի ցորենների տեսակներն ու ձևերը  
(նորմալ մեծությամբ)





Լոռի-Փամբակի հաճարների ցանֆերի մեջ տարածված միա-  
 հատիկ ցորենը .—*Tr. monococcum* v. *Hornemani* Clem.  
 (նորմալ մեծությամբ)






Վայրի ցորենի բփերը ( $\frac{1}{3}$  նորմալ մեծությամբ)





Շիրբուլաղի շրջակայքի վայրի ցորենների տարածման շրջանը 1930 թ․






Վայրի ցորենների տարածման շրջանը Շորքուլաղից դեպի  
Ավդալլար տանող հանապարհի մոտերքը







Վայրի ցորենների հունձը Պետեամալուսարանի հողամասում  
1930 թ.





վայրի ցորենների ցանքը Պետիամալսարանի հողամա-  
սում 1930 թ.







$\frac{Lp4}{142}$

309